



EU4Energy

ՄՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

- Հանաչելով կլիմայի փոփոխությունը որպես ներկա ժամանակի ամենամեծ մարտահրավերներից մեկը, ինչպես նաև գիտակցելով կլիմայի փոփոխության ազդեցության մեղման և կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած ռիսկերին հարմարվելու կարևորությունը:
- Կարևորելով ԵՄ «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությունը՝ որպես Կլիմայի և էներգիայի բնագավառներում տեղական գործողությունների աշխարհի ամենամեծ շարժումը, որը համախմբում է կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման ռազմավարությունների իրականացման կամավոր հանձնառություն ստանձնած հազարավոր տեղական ինքնակառավարման մարմինների:
- Կիսելով «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը անդամակցող համայնքների ձգտումները՝ հասնելու իրենց տարածքների ղեկավարողացման գործընթացի արագացման, կլիմայի փոփոխության անխուսափելի ազդեցություններին հարմարվելու նրանց դիմակայության ամրապնդման, ինչպես նաև իրենց ֆաղափարներին հուսալի, կայուն և մատչելի էներգիայի հասանելիության ապահովման ընդհանուր նպատակին:
- Գիտակցելով «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը միանալու և ակտիվ մասնակցության հնարավոր օգուտները, ինչպիսիք են՝ ավելի բարենպաստ ֆինանսական հնարավորություններ տեղական կլիմայական և էներգետիկ գործողությունների համար, ազգային և միջազգային համագործակցության և աջակցության ուժեղացում, ֆաղափարների կյանքի որակի բարձրացում և համայնքի էներգետիկ անվտանգության բարելավում, միջազգային բարձր նախաձեռնում և տեսանելիություն և այլն:
- Հաշվի առնելով, որ Գյումրին միացել է «Քաղաքապետերի դաշնագրին» 2014 թվականին՝ պարտավորվելով մինչև 2020 թվականը նվազեցնել CO₂ արտանետումները առնվազն 20%-ով, իսկ 2017 թվականին մեղմել է համայնքի Կայուն էներգետիկայի զարգացման գործողությունների ծրագիրը, ինչպես նաև դիտարկում է կլիմայական իր հավակնությունները մինչև 2030 թվականը ավելացնելու և երկարաձգելու հնարավորությունը:

Սույն Մտադրության Հայտարարությամբ Գյումրու համայնքը հաստատում է իր հետաքրքրվածությունը միանալու «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նոր նախաձեռնությանը և իր հնարավորությունների սահմաններում՝ կատարելու իր հանձնառությունները Դաշնագրի շրջանակներում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դաշնագրին միանալու ընթացակարգը պահանջում է, որպեսզի նախաձեռնությանը միանալու մասին որոշումը հաստատվի նախապես համայնքի ավագանու կողմից, սույնով հաստատում են, որ այս հարցը կընդգրկվի Գյումրի համայնքի ավագանու հաջորդ նիստի օրակարգում:

Այն դեպքում, եթե Գյումրու ավագանին դրական որոշում կկայացնի Դաշնագրին միանալու մասին, Գյումրու համայնքապետարանը կնախաձեռնի միացման գործընթացը՝ ստորագրելով Դաշնագրին միանալու նամակը և,




EU4Energy

այնուհետև, ներկայացնելով ստորագրված նամակը և ավագանու կողմից ընդունված համապատասխան որոշման պատճենը Դաշնագրի ֆարտուղարություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում:

Վարդգես Սամսոնյան

Գյումրու քաղաքապետ

13 հոկտեմբերի 2022թ.



Վարդանանց 1, Գյումրի, Շիրակի մարզ, ՀՀ

Հեռախոս՝ +374 312 32606

Էլ. փոստ՝ gyumri@gyumri.am



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» հունիսի 2014 թվականի N 71- Ա

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԵԿՆԱՐԿԱԾ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ
ԴԱՇՆԱԳԻՐ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԱՆԱԼԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 22-րդ կետով և առաջնորդվելով
Եվրոպական միության կողմից մեկնարկած <<Քաղաքապետերի դաշնագիր>>-ի
դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի
համայնքի միանալը Եվրոպական միության կողմից մեկնարկած «Քաղաքապետերի
դաշնագիր» միությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ (16)

Դեմ (0)

Ձեռնպահ(0)

Ա. Ադամյան

Գ. Ադամյան

Ա.Բաղդամյան

Լ.Բարսեղյան

Մ.Գաբոյան

Ա. Գրիգորյան

Վ. Եղիզարյան

Հ. Խաչատրյան

Հ. Կարապետյան

Տ. Հովհաննիսյան

Ն. Մեսրոպյան

Ռ. Մխիթարյան

Վ. Շիրինյան

Ե. Պողոսյան

Մ. Սահակյան

Տ. Փանոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

ք. Գյումրի

«12» հունիսի 2014 թ.



Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

(Գ) Գրքագր

(Գ) Գրքագր

(Գ) Գրքագր

Ս. Բալասանյան

Ս. Բալասանյան

Ս. Բալասանյան

Ս. Բալասանյան

Ս. Բալասանյան